ԱՐՄԱՆ.— (Մենակ, արիսուրեսի հոգսերը մեր պցնով)։ Գնա՛, պնար, գե՛ղեը լեր, խալխի վուսնեիրուն ուշ՚ չարա, նրանց վուսի ցի՛ խը լեր... Ո՞վ իս ըս ուսն, ի՞նչ իս ըս ուսն, ի՞նչ մարթահնարուն իս ուսն... ի՞նչ անուս ուներս ուսն... Ծիտր ուսուկ՚ն, վուսի՛ ոսկի ևս պցին գրի՛ն վրան ևս մեն պատ, պեղնի հոգ ևս հասկերին՚... ի՞նչ հաշրի, չիսնեն վեն՝ վրա ինչո՞վ իս ասկել... Գուն իս մարի չիս, մարթկնրանց հաշրի մա կերասիր է սոխրդի գրի Նսուռան... Գի՛չիր չարչերուկ, ցե՛ռեկ չարչերուկ, երդնգրի սա՛կը լուսացրու, անձրևուկ ու գաստ հոգ՚վ ատու, ձմեռը ցրտե՛մեն կոնկոռնա, ասուռը արեգակի շուքուսեն է՛ուկ ու խո՛ռուկ... պնա՛ էնեցը մե ձիգա հա՛ց ճարե ու էն ձիգա հացով պե՛դրդ ու գրկի՛ դր պահե... Էս ի՞նչ, ի՞նչ մարթուձիեն... Էսեցը շուեն էլ է ճարում մե ձիգա, վուր տունը պահում է... Մինչամ գուն էլ շուեն էլ շուեն ա՛չխրգիս էրեսրեն մաս իս գալի, գուն էլ շա՛ն պես կեռա-

Արարված երկրորդ

Հարուստ դաճլիճ Աբուբիճի տաճը

ՏԵՍԻԼ ԺԴ

Պեպո, Աբուբիճ

ԱԲՈՒԹԻՆ.— Հը, ո՞ւր իս էկի, ախպեր։

ՊԵՊՈ.— Ա՛յ, համեցե՛ք, նատի՛։ (Ինքը մոտ քաշելով մի աթոռ, նըստում է)։

ԱԲՈՒԹԻՆ.— (Նստելով ընկողմարանի վրա, առանձին)։ Իմ տանը սա է մոհբաթ անում[1] ինձ։ (Պեպոյին)։ Ախար, էս չախն ո՞ւր իս էկի։

ՊԵՊՈ.— Կուշտը քաղցածին ի՞նչ է հարցնում... Բողազս մի՛ դուս կտրի, ա՛ղա Աբուբին. թե էս ահաթիս չիս տա, վարցկ կ՚ոնիս, վուր ինձ սպանիս էստի էվետ։

ԱԲՈՒԹԻՆ.— Թե իմքին պարտ իմ, ախպեր, բա՞ս գեմարթլեբի[2]։ Ո՞ւմ փուղն իմ կերի, վուր քու փուղն ուտիմ... Ինչոր բարաթ[3] էիր ասում... Գիա՞ր, բերիլ ի՞ս։

ՊԵՊՈ.— (Առանձին, կրծքին խփելով)։ Ը՞մ... (Բարձր)։ Բարաթը չկա, իս գի՛դիս. դուն քու դավթըրներումը գիա՞ր, թե չէ։

ԱԲՈՒԹԻՆ.— Իմ դավթըրներումը շատ պտոտեցի, հա՛խ Աստձու, ամա մէ ասո[4] էլ չգիա ձիզ համա։

ՊԵՊՈ.— Բաս ի՞նչ անինք հիմի։

ԱԲՈՒԹԻՆ.— Ի՞նչ պիտի անինք. դուն քիզ համա, ես ինձ համա։ (Գրպանից հանում է սաթի համբիչը և դցում)։

ՊԵՊՈ.— Վո՞ւնց թե՝ դուն քիզ համա, ես ինձ համա։ Բաս քու մտկումը պա՞րտ չիս ի՞նձ։

ԱԲՈՒԹԻՆ.— Ախպեր, ի՞նչ պիտի պարտենամ. բարա՛թ դուն չունիս, դավթրումս ես վունչիչ չունիմ գրած, ի՞նչ պիտի պարտենամ քիզ։

ՊԵՊՈ.— Բաս քու սրտի դավթրումն էլ վո՞ւնչիչ չկա գրա՞ծ։

ԱԲՈՒԹԻՆ.— Սրտի դավթարը վո՞ւրն է։

ՊԵՊՈ.— Բաս քու խճպտանքը վո՞ւնչիչ չի ասում քիզ, էլի. խո գի՛դիս, վուր պարտ իս։

ԱԲՈՒԹԻՆ.— Վուր գիդենամ՝ խո կու տամ, էլի՛. էլ ո՞ւր իմ խոսեցնում...

---

1 մոհբաթ անել— *հյուրասիրել*

2 բա՞ս գեմարթլեբի — *ինչպե՞ս ստոբրանամ (քո առաջ)*

3 բարաթ— *պարտամուրհակ*

4 ասո — *ասա*

ՊԵՊՈ.— Բաս Գիքոն ո՞ւր է ասում... Նրա հալալութինը դիփունքը գիդին։
ԱՐՈՒԹԻՆ.— «Մելամ,— ասում է,— թավիսի կուդի մոիզվանա մոծամեթ»[1]։
ՊԵՊՈ.— Ապա Արութին, վերիվը խո Աստուձ կա քու սիրտն էլ է կարքում, իմ սիրտն էլ, ա՛րի-Աստձեմեն ձևոը մի՛ վիկալնի։
ԱՐՈՒԹԻՆ.— Ի՞նչ շաուիր իս մոգոնում գլխիս, ախպեր, օմքին լաե, հենց կու գիդենա՝ ղուրթ իս ասում։
ՊԵՊՈ.— Դուն գի՛դիս, վուր ղուրթ իմ ասում։ Քու վուրթկերանց արիվը սադաղա խղճա՛ միզ։ Էդ փուղը ես ինձ համա չիմ ուզում...
ԱՐՈՒԹԻՆ.— (Խոսքը կտրելով)։ Տեր օղորմած Աստուձ։
ՊԵՊՈ.— (Շարունակելով)։ Մո՛ւսափ, մո՛ւսափ, ինչրու վիրչն ա՛նգաճ դի. էտ փուղով իմ քուրը նշնած է, խոստացիլ ինք, պիտինք տա, ու քե էս սհաթիս չտվի՛նք, քվիրս թո՛ղնում ին, ո՛րիշ ախչիկ ին ուզում էս գիշեր։ Ախար, մե Աստձու այեսպ դադաստանը մի՛ տղ բի, է՛... խո քիչ էլ կու խոսեցնին էնդի, ինձ էլ. ի՞նչ ջուղաբ կու տաս, վուր չիս տալի։
ԱՐՈՒԹԻՆ.— Փիե՛... (Մտածմունքի մեջ է ընկնում)։ Այեսպ դադաստանը գիդենա, վուր դրուստ միտս չէ էտ պարտկը։
ՊԵՊՈ.— Ես ասում իմ դրուստն, էլի՛, ինձ չիս ավտո՞մ։
ԱՐՈՒԹԻՆ.— Վա՛, էտ վո՞ւց կ'ուլի, Պեպան. ամեն մարթ վուր գա ու էտենց խոսի, տասը միլիոն էլ վուր ունենամ, մե օրումը կու հատնի։ Չէ՛, ախպեր, միր առուտուրի հեսաբը էտենց չէ։
ՊԵՊՈ.— (Վեր կենալով տեղից և գլխարկը ծածկելով)։ Բաս չի՛ս տալի, է՛լի։
ԱՐՈՒԹԻՆ.— Պարտկով կի վունչիչ տալացու չիմ, ախպեր. ամա քուր իս մարթու տալի՛, ջո՛ւթատ աճկիս։ (Ծոցից հանում է պորտմոնեն)։ Ըա՛հա։ (Թղթադրամ տալով), վարցկ բան է, բռնե՛, ախպեր։
ՊԵՊՈ.— (Գլխարկը վեր առնելով, գլուխ է տալիս)։ Ա՛յ, Աստուձ վուրթիքդ ղորացնե՛։ (Առնում է փողը)։
ԱՐՈՒԹԻՆ.— Է՛տ հինգ թումա՞ն... Համբրե՛ (Պեպոն դունատվում է), դրուստ հինգ թուման է... Հինգ թուման էլ դուքնովս ա՛նց կացի, էնդի կու տան. էս սհաթիս օմքին կու ղրգիմ։ Գնա՛, ախպեր, Աստուձ բարի վայելում տա։
ՊԵՊՈ.— (Փողին նայելով և շփոթված)։ Հի՛նգ թուման ու հինգ թումա՛ն... (Լուռթյուն. հետո գլխարկը ծածկելով)։ Մնացա՞ծը... Ախար իմ քվիր համա հարուր թուման ինք խոստացի։
ԱՐՈՒԹԻՆ.— Ես ի՞նչ անիմ, վուր խոստացիլ իք. բեհեսաբ[2] նամաղուլ իք

---

1 Աղվեսն իր պոչը բերից վկա
2 բեհեսաբ նամաղալ — չափից դուրս անմիտ, ապուշինի գործ

արի, վուր խոստացիլ իք. ո՞ւմ փուղն էիք խոստանում, վուր խոստացիլ իք։ Մարթ իր լհեբի գորա կու ձգի վո՞ւտը, թե չէ։ Դուք էլ վուր հարուր-հարուր թումնիր իք խոստանո՞ւմ, էլ ուրիշն ի՞նչ անի։ Էս ի՞նչ խարար էլավ աշխարքն, ա՛խպեր. էլ օչովու համա չափս ու ձիվ չկա։

ՊԵՊՈ.— Միր բանը մինք գիդինք, պարոն, ձիր բանը՝ դուք. խոստացիլ ինք, միր փուղն ինք խոստացի, քիզ ի՞նչ դավի։

ԱՐՈՒԹԻՆ.— Խոստացիլ իս ու տար ի՛րան տու, է՛լի. էլ ի՞նչ իս ուզում։

ՊԵՊՈ.— Ի՞ս տու, վուր տամ, է՛. ախար էս վուր տալիս իս, մտախարա իս գցո՞ւմ, թե ի՛նչ խարար է։

ԱՐՈՒԹԻՆ.— Ա՛րի ու արապհաներուն վա՛րցկ արաւ Տո՛ ինչո՞վ չիս իմանում, վուր վունչիչ պարտ չիմ ես ձիզ ու էտ էլ ինչոր տալիս իմ, հոքաւս համա բախշում իմ։

ՊԵՊՈ.— Բա՛խշում ի՛ս... Գանա ես ա՞խկատ իմ, էկիլ իմ օ՛ղորմութին իմ ուզում քիմե՞ն. ես իմ հա՛խն իմ ուզում, իմ հա՛խը. ի՞նչ կ՛անիմ ես քու բախշիշը։

ԱՐՈՒԹԻՆ.— Չիս ուզի ու է՛ստի տաւ, ինձ պետիկը դու քաւ Ախկատ ու հմպարտ վուր կ՛ոսին, էս է, ա՛յ Բի՛, էլի՛, բի՛. ի՞նչ իս բամաշա անում։

ՊԵՊՈ.— Բաս բամամ չի՛ս տալի, էլի՛։

ԱՐՈՒԹԻՆ.— Տո՛, գժվի՞լ իս, թե ինչ խարար է. ի՞նչ իս ուզում ինձանից։ Չոռով պա՛րտի կու՛լի աշխարքումը՝ շլինքս իս գցո՞ւմ։

ՊԵՊՈ.— (Առաջ գալով)։ Աբա օ՛րթում կի, թե պարտ չիս, օ՛րթում կի, էլի՛. մա՛րթ կու՛լիս՝ օրթում կ՛ուտիս։

ԱՐՈՒԹԻՆ.— Օ՛րթում, հա՛վատս, Աստուձ (Պեպոն զարհուրանք է արտահայտում), երգինք, իմ վո՛րթկերանց արխվը գիդենա, վուր վունչիչ պարտ չիմ...

ՊԵՊՈ.— (Զայրացած)։ Ա՛յ, Աստուձ ու երգի՛նք խոռ՛վ կենա գլխիդ (Խփելով փողը Արութինի երեսին)։ Հը՛, բռնե՛, ա՛ճկդ դի, կնպաղ համա իմքին կունենաս առնելու։

ԱՐՈՒԹԻՆ.— (Աղաղակելով և տեղից վեր թռչելով)։ Օտիկցի՛ք, զարա՛ւլ, սպանեցին, մորթեցին... Ո՞վ կաք էտի... (Ներս են թափվում՝ ձախ դռնից էփեմիան, աջ դռնից Սամսոնը, հագնված և զարդարված, ինչպես պատվիրել էր էփեմիան երրորդ տեսիլում, իսկ դիմացի դռնից երկու այլ ծառա՝ Ֆրանկով և սպիտակ ձեռնոցներով։ Տեսարան)։

ՏԵՍԻԼ ԺԵ

Նրաճի, էփեմիա, Սամսոն, երկու այլ ծառա

ՊԵՊՈ.— (Ձախ ձեռքով ցույց տալով ծառաների վրա)։ Է՞ս է քու մարքութիին, էլի՜... (Երկար լռություն)։ Ա՛յ, հա՛րամ ըլի քիզ քու հարըստութիինը։

ԱՐՈՒԹԻՆ.— (Սաստիկ շփոթված, ծառաներին)։ Տո՛ օտկեցե՛ք, է՛, ի՞նչ իք թամաշա անում. տեսնում իք՝ ուզում է սպանի ինձ։ (Սամսոնը և ծառաները մոտենում են Պեպոյին)։

ՊԵՊՈ.— (Ծառաներին մղելով).— Մո՛ւտափ, դե՛նը... (Արութիինին)։ Էս օտկե պատիրը վուր սարքիլ իս, ո՞ւմ փուղով... Հազար ինձպեսներուն թա՛լնիլ իս, գա՞նա. քար ու կիրը միր ա՛րնով իս շաղըղի, գա՞նա. դիփունանց աճկիրը աբլանդվա իս արի ու հիմի ծանդր ու բարակ քիզ համա նստած քե՛փ իս անում, է՛լի։

ԷՓԵՄԻԱ.— Դո՛ւս արեք, դո՛ւս արեք։

ԱՐՈՒԹԻՆ.— Դո՛ւս, դո՛ւս ասում իմ։ (Ծառաներին)։ Դո՛ւս արեք. չիք իմանո՞ւմ։ (Ծառաները հարձակվում են Պեպոյի վրա)։

ՊԵՊՈ.— Դո՞ւս... (Ծառաներին նորից մղելով)։ Դե՛նը, դե՛նը։ (Ծառաները փոքր-ինչ հեռանալով, կանգնում են դիմացի դռան առաջ։ (Արութիինին)։ Փուղիրս հաշա՞ իս ուտում ու դո՛ւս էլ իս անում, է՛լի... (Լռություն)։ Դո՛ւս կ'եհամ. դո՛ւս կ'եհամ. չարես ի՞նչ է, զորը քուն է, տերը դուն իս էստի... Ամա լավ գիդացի, պարուն Արութիին, էս արարմունքը քիզ չի մնա... վերիվն Աստուձ կա, քնթեմեդ կու հանե քու անօրենութիինը... (Ծառաներին հրելով)։ Դե՛նը... Դե՛նը... (Դուրս է գնում դիմացի դռնից)։

ԱՐՈՒԹԻՆ.— (Պեպոյի հետևից, ծառաներին)։ Գնացե՛ք, գնացե՛ք հիդը, վունչիչ չտանե, վունչիչ չփախցնե։ (Ծառաները դուրս են վազում Պեպոյի հետևից)։

Արարված երրորդ

Առաջին աւաւվածի սենյակը, միևնույն ձևով կահավորված և դամբը թոկի վրա փռած։ Առավոտ է

ՏԵՍԻԼ Ը

ՊԵՊՈ.— (Մենակ։ Ներս է մտնում դիմացի դռնից գլխարկով ու զարդի հագուստով)։ Է՛սենց էլ աշխա՞րք... (Վերցնում է գլխարկը, աջ ձեռքի ցուցամատով ճակատի քրտինքը սրբում և գլխարկը կրկին ծածկում)։ Մարթ գլխեմեն ինչքու վուտը դուրթ ըլի ու էլի ի՛նքը սուտ

---

1 Հաշա— ձրի, անվճար

գրաբ.— (նոսրաց գալով)՝ ծ. ո՛վ ընկեր՝ ինքդ ասածդ՝... գեա՛, գեա՛, էհ-
էյ, գնա՛, նստի՛ բիրթուն ու լավ բաշտի փի՛ր արա աշխարհի բա-
նիրը... Դուն՝ տալուրվածիդ էդքան մա՛ն արի, տեսնի՛ ի՞նչ է ասելի
գրաբ.— նշ., ի՛նչ ըռնաբ է, գիրը նրուքիւն (ձեռքը գրպանն է տանում
և տանում քրքրոտի տուրիը)՝ ջէ՛, էս չէր, ալա գիր մի ձեկ է... (ձա-
նում է տեղում քրքրոտի տուրիը)՝ հէ՛ր... նշ՛յ (գտած է թուղթը և մուրհակը տա-
նում)՝ ես գնամ ձեզ բան ասեմ, որ ձեր ականջները ծակ-ծակ անի (Ինքը հեռանում)՝
ՆՈՒՒԻՒՆ.— ուշ՛, ուշ՛խանում իս ուրեմ իսկի. աշխարքն ալան-ձալան
ես գնամ՝
գրաբ.— ջէ՛, չէ՛, ա՛րա նրուքիւն, էս ու՞նցա ի՛նչու, գա՞նա գուն է՞ա
հասկ մ՛ա. ալա էս ըռնաբ խոսա փալիտիկաչուրց իսկական
հետեկ մարդ է՝ ասելով իմ ձեռը չդիբէ՝ (Ցած ձեռով մուրհակը տա-
նում իմ ձեռից՝ էս է՛, վեր ասելով)՝ նշ՛յ, ա՛րա, արա՛՝
ՆՈՒՒԻՒՆ.— (Դուրսը հոսպցնելով մուրհակը)՝ նշ՛յ, ձեզ ասած իմ ասածը,
գրաբ.— ջնդի վալիա՝ Նրուքիւն, Նրուքիւն՝ (Ցասումից ածելով)՝ ես՛, ա՛յ... «Ջնդի վալիա՝
ջնդի վալիա՝ (Ջարմանալով, Տնասրին)՝

ՏԵՍԻԼ Ա

Նրուքիւն, Գրիգոն, Երեսուն Եվ վեցտասն

ջնդի վալիա՝ (Նոսր գալով միմյանի դեմից)՝ նշ՛յ ձեզ սուտ իմ ասած՝
ՆՈՒՒԻՒՆ.— (Հեսնելով)՝ նշ՛յ, արա՛՝
գրաբ.— (Նոսր գալով)՝ Մո՛ւկ, տա՛ճկացի նստի՛, ձեզ ասելը էլ գա՝
ձեզ ասելիս—իմ սարսքը է

ԱՐՈՒԹԻՆ.— (Շփոթվելով և կակազելով)՝ է՛տ... է՛տ... (Ձեռքը մեկնելով) ի՛մ... ի՛մ... ձեռքն է՛։

ԳՐՔՈ.— (Մոտեցնելով մուրհակը)՝ Բաս ի՛մն է՛։

ԱՐՈՒԹԻՆ.— (Ճանաչելով մուրհակը, առանձին)՝ Էս ի՞նչ երգնուց պատիժ էր... (Ձեռքերն առաջ տանելով)՝ Մե լավ տեսնիմ...

ԳՐՔՈ.— (Մուրհակը հեռացնելով)՝ Մո՛ւսափ, աղա ջան, է՛։ Ախաբ էնդաղա վուր ասում էի, թե ես վկա իմ, վուր պարտ իս, ո՛ւտ էի ասո՞ւմ. ամա վուր քու օխտեմեն չէկա, ես ի՞նչ անիմ (Ազատակելով)՝ Գոհանա՛մ քու դադաստանին, Ա՛ստուձ։

ԱՐՈՒԹԻՆ.— (Կամենալով մուրհակը խլել)՝ Մի տեսնիմ, ասում իմ...

ԳՐՔՈ.— (Գրպանը դնելով մուրհակը)՝ է՛, ա՛ղա Արութին, ձեռը վիկալ, քու հորն օղորմի։ Ասում իմ վուր փաթերակի թուխտ է, է՛, էս սհաթիս գու քա Պեպոն, Կակուլին մե նմուտումը կու գթնե նրան։ Գուն էստի մո՛ւսափ տու, մե գնամ Շուշանին իմաց անիմ։ (Ճանապարհից ետ նայելով Արութինին. դուրս է գնում ձախ դռնից)։

ՏԵՍԻԼ ԺԱ

ԱՐՈՒԹԻՆ.— (Մենակ. երկար ժամանակ սառած կանգնած է, հետո ուշքի գալով)՝ է՛ս հանգի էլ օյի՛ն... Շատ բան է էկի գլուխս, ամա էս քահարը չէ էլի.. վո՞րղանը լուս ննգավ էս անիծած բարաթը... վո՞ւնց լուս ննգավ... էրա՛զ է՛... չէ՛, վո՞րղանցի էրազ է... Թե էրազ է (Շուրջը նայելով), էստի ի՞նչ իմ շինում... էս... Պեպոյի տունն ու ե՛ս... (Շոշափում է իրան)՝ Արութին Զիմզիմովս էստի՞... Չէ՛, պրուստ Աստձու պատիժ է... Չէլավ. էլի՛... է՛նզադա բանիրը մարսեցի ու կուժը էս մեկի վրա է կոտրվում, էլի՛. է՛ս էր վիբշն, էլի՛... խալխը վուր իմանա, ի՞նչ կ՛ոսին... էլ ո՞վ կու ավտա ինձ... Ագահութինը աճկիրս կապից, էլ սիվ ու սպիտակ չդոգեցի... Հենց էս սհաթիս էլ էնզադա խալխումն ասի... վուր ես վունչիչ պարտ չիմ, ասի... Հիմի գնա՛, սիվցավ էրեսդ... Ամո՛ւթ քիզ Արութին, ա՛մութ քիզ. էս վո՞ւնց բերիր բանդ, վո՛ւնց... (Երկար լռություն)՝ Չէ՛, ուրիշ շարա չկա, վունցոր ըլի, պիտի էստի էվետ ազատիմ բարաթս... Թեգուզ տաս թումանն էլ գլուխ գնամ... Թեգուզ քսան, թեգուզ յարսուն, թեգուզ մեկին էրկու... Իմ հա՛խն է, թո՛ղ ջանս դուս գա (Ընկնում է աջ կողմի աթոռի վրա)։

ՏԵՍԻԼ ԺԲ

Նա, Պեպո

ՊԵՊՈ.— (Ներս է գալիս աջ դռնից, առաջին արարվածի հասարակ հագուստով և գլխարկը ծածկած. Տեսնելով Արութինին, ապշում է)՝ Վա՛, դուն էստի՞։

ԱՐՈՒԹԻՆ.— (Գլխարկը վերցնելով, դնում է սեղանի վրա)։ Հա՛, հենց ես, ի՞նչ իս արմբնում։

ՊԵՊՈ.— Գանա դուն ինքդ չիս արմբնո՞ւմ, վուր է՛սաի ի՛ս, ես վո՞ւնց չարմբնամ... Մե ասա՛, ի՞նչ քամին է բերի քիզ էսթենը, յա ի՞նչ բարի հրիշտակ է մաի սրտումդ, յա ի՞նչ չար սատանա բոթի քիզ դեսը։

ԱՐՈՒԹԻՆ.— Ղոնաղի մոհբաթ չիս գիղացի, Պեպո։

ՊԵՊՈ.— Դո՛ւն՝ իմ ղոնա՛ղ. էրեսդ խե՛չը հանե։ Քիզ վրա մինձ դուշման չունիմ ես աշխարքումը, ու դո՛ւն իմ ղոնա՛ղ։

ԱՐՈՒԹԻՆ.— Նստի՛, հալա հենց ապրիս։

ՊԵՊՈ.— Դուն նստած իս, էլի՛. ես էսենց էլ լավ իմ։ Մե ասա՛ ի՞նչ իս ուզում... Թե ձուգն առնելու իս էկի, յանղլիշ իս[1] (Դառը ժպիտով և հեգնորեն), ղա՛դաղա է։

ԱՐՈՒԹԻՆ.— Պեպա՛ն... ա՛րի, ախպեր, բարիշինք։

ՊԵՊՈ.— (Ծաղրելով)։ Օմքին իսո չէ՞ աղոթի քիզ, ա՛ղա Արութին։

ԱՐՈՒԹԻՆ.— Աղոթիլ ին, թե չին աղոթիլ, ես քիզ ասում իմ, ա՛րի բարիշինք։

ՊԵՊՈ.— Իմ բարիշիլը ինչի՞դ է հարկավուր, ա՛ղա Արութին. դուն մինձ մարթ, ես մե խիղճ օղորմելի, դուն հարուստ, ես ախկատ... (Հեգնորեն)։ Վա՛խենում իս, վուր իմ մագիեր քիզ չղրգին բիրթը՛, թե՞ ճռնիրդ դողում է ինձամեն։

ԱՐՈՒԹԻՆ.— Տո՛, ես ուզում իմ քիզ լավութին անի։

ՊԵՊՈ.— Ի՛նչ ձեռնեմեդ էկավ, իսո ա՛րիր. փուղ էիր պարա՝ հաշա կերար. էկա տունդ՝ խնդրելու, տանեդ դուս արիր, վիրչը բիրթն էլ իս դրգիլ տալի, ուրիշ ի՞նչ լավութին պիտի դուս գա ձեռնեմեդ, ա՛ղա Արութի՛ն։ Էկիլ իս, վուր մա՛սխարա գցիս ի՛նձ։ Հե՛րիք է, հե՛րիք, պրուն... Գնա՛, գնա՛, Աստձուն փա՛ռք տու, վուր իմ տանն իս ու իմ օճըռքի տակն իս գթնըվում, թե չէ էս էրած սրտիս վրա էլ սապ չէիր պրծնի իմ ձեռնեմեն... Միտդ է՞... իսո մի՛տդ է՝ ինչ հանգի դուս արիր ինձ քու տանեմեն... էն արարմունքը քի՛չ կու սապ գեր, քի՛չ, ա՛ղա Արութին։ Ես քիզ խնդրում իմ, համեցեք գնա՛, ջա՛փա՛ քաշե, վի՛ կաց, հորես կու տանին ինձ, էլ վուխտ չկա. ուզում իմ մորս ու քվիրս բարովիմ։

ԱՐՈՒԹԻՆ.— Տո՛, էտ բանը իմ ձե՛ռին չէ՛. էլ չղրգիլ տամ քիզ բիրթը, ուրիշ ի՞նչ իս ուզում։ (Պեպոն զարմացած նայում է, իսկ դրսից լսվում է կակուլու ձայնը՝ էկա՛վ)։...

---

[1] յանղլիշ իս — սխալվում ես

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ
(1843—1891).

ՄԵԾԱՊԱՏԻՎ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ

(հատվածներ)

Ա.

Վազար ութը հարյուր յոթանասուն... չեմ հիշեր՝ քանիին սեպտեմբեր երեսունը մեկին, ներեցեք, երեսունին պիտի ըսեի, վասն զի սեպտեմբերն երեսուն օր միայն ունի, երկար և ընդարձակ թիկնոցի մը մեջ փաթթըված միջահասակ և գիրուկ մարդ մը, որ Տրապիզոնի չոգենավեն նոր ելած էր, Գալաթիո նավամատույցին վրա կայնած՝ նավակ մը յուր սնտուկները հանել կաշխատեր։

Կը տեսնե՞ք՝ որչափ պարզությամբ սկսա, Պատմություն հետաքրքրական ընելու ջանքով և անկից քանի մը հարյուր օրինակ ավելի ծախելու համար չըսի, թե նույն օրն սաստիկ հով մը կար, թե տեղատարափ անձրև կու գար, թե խուռն բազմություն մը հետաքրքրությամբ դեպ՝ի Գալաթիո հրապարակը կը վազեր, թե ոստիկանությունն աղջիկ մը ձերբակալած էր և այլն խոսքեր, որովք վիպասաններն կսկսին միշտ իրենց վեպերը։ Ես ալ կրնայի ըսել այս ամենը, բայց չըսի, որովհետև նույն օրն ոչ հով կար, ոչ անձրև, ոչ խուռն բազմություն և ոչ ձերբակալված աղջիկ մը։

Արդ, առանց կասկածելու հավատացնք պատմությանս, որ ժամանակակից դեպք մ՝ էր։

Այս ճամփորդն օժտված էր դույզ մը խոշոր և սև աչքերով, դույզ մը հատա, սև և երկար հոնքերով, դույզ մը մեծ ականջներով և դույզ մը քիթով... չէ՛, չէ՛, մեկ քիթով, թեպետև բայց դույզ մը քիթերու տեղ կբռնար ծառայել, անոր մեծությունը սխալեցուց պիտ ուներ այնպիսի նայվածք մը, որուն նման պ. Հ. Վարդովյան[1] հանդիպեր յուր աչքերով, կը հարցուներ այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կուզես՝ թատրոնիս մեջ ապուշի գեր կատարելու համար»։

Սնտուկներն և անկողինն, որ քուրջի մը մեջ ներփակված էր, նավակեն հանելուն պես ճամփորդն քաշեց քսակն և նավավարին իրավունքը վճարելով՝ բեռնակիր մը կանչեց։ Հինգ բեռնակիրներ ներկայացան իրեն։ Տարակույս չկա, որ եթե հինգ կանչեր, քսաներհինգ պիտի ունենար յուր առջև մայրաքաղաքիս սովորությանը համեմատ։

— Ո՞ր կողմ պիտի երթաք, աղա,— հարցուց բեռնակիրներեն մին՝ մեկ ոտքը սնտուկներեն միուն վրա կոխելով։

— Բերա, Մաղկի փողոց, թիվ 2 պիտի երթամ,— պատասխանեց խոշոր մարդը։

— Շատ աղեկ, հասկցա, Բերա, Մաղկի փողոց... պատվական փողոց մ՝ է,— ըսավ հարցումն ընող բեռնակիրն և սնտուկ մը չալկնելով սկսավ երթալ։

— Մաղկի փողոցն ես ալ գիտեմ,— ըսավ երկրորդ բեռնակիրն և սնտուկին մեկն ալ ինք առնելուն պես՝ Բերայի ճամփան բռնեց։

— Ես ամեն օր կերթամ Մաղկի փողոցն,— ըսավ երրորդն և մարդուն անկողինը գետնեն վերցնելն, կռնակին վրա առնելն ու վազելն մեկ ըրավ։

Այս գործողություններն այնքան արագությամբ կատարվեցան, որ մարդը շվարելով սկսավ չորս կողմը նայիլ՝ տեսնելու համար բեռնակիրներն, որ բազմության մեջ անհայտ եղած էին։

— Ի՞նչ խայտառակություն է աս,— պոռաց վերջապես ոտները գետինը զարնելով,— ո՞ւր տարին անկողինս և սնտուկներս, ատոնք ի՞նչ իրավունք ունին իմ անկողնուս և սնտուկներուս խառնվելու, ի՞նչ անիրաս մարդ են եղեր այս տեղաց մարդերը. ինչ որ կտեսնեն՝ կառնեն, կը տանին։

— Մաղկի փողոցը մենք ալ գիտենք, աղա՛, մեզի ալ բան մը տուր որ տանինք,— ըսին մյուս երկու բեռնակիրները։

— Մաղկի փողոցն ալ գետնին տակն անցնի, գուք ալ,— պատասխանեց նեց մարդն, որուն այտերն նեզուքենեն կարմրիլ սկսած էին։

---

1 պ. Հ. Վարդովյան (պարոն Հակոբ Վարդովյան, 1833—1898 թթ.)— թատերական անվանի գործիչ. Թուրքական թատրոնի հիմնադիրը

Որկու բեռնակիրները խնդալով հեռացան. և ճամփորդն ալ յուր սնտուկներուն առևն կը պատրաստվեր, երբ բարձրահասակ, թխադեմ, փոքր աչերով մարդ մը ուսերը տնկած, ձեռները շփելով և բռնապրոսյալ ժպիտով մը մոտեցավ անոր և քազաքավարական ձևով մը ձեռները բռնելով հարցուց.

— Դո՞ւք եք Աբիսողոմ աղա, ե՞րբ եկաք, ո՞ր շոգենավով եկաք, ի՞նչպես եք, ձեր եղբայրն ի՞նչպես է, ազգային գործերն ի՞նչպես են Տրապիզոն, հացին գինը քա՞նի է հոն, անձրև եկա՞վ այս օրերս ձեր քաղաքը... վայ, Աբիսողոմ աղա, վայ...

— Ես եմ Աբիսողոմ աղա, հիմի եկա, տաճկի շոգենավով եկա, շատ աղեկ եմ, եղբայրս ալ աղեկ է, ազգային գործերն ալ աղեկ են Տրապիզոն, հացին գինը մեկ դահեկան է, անձրև չեկավ այս օրերս մեր քաղաքը,— պատասխանեց փութով թիկնոցաբնակն՝ առանց ճանաչելու այս անձն։

— Ներեցեք, թողուիք յուն ըրեք, որ չկրցի մինչև շոգենավ գալ զձեզ դիմավորելու համար։ Ինծի գրված էր Տրապիզոնեն, որ այս շաբթու անպատճառ հոս պիտի գաք...

— Ես ատանկ բաներու չեմ նայիր։

— Արդարև մայրաքաղաքս ինքզինքը բախտավոր համարելու է ձեզի պես պատվական ազգային մը, շնորհալի երիտասարդ մը, ողջամիտ ժեկը...

— Սնտուկներս...

— Ագնիվ սիրտ մը, վեհանձն հոգի մը...

— Բեռնա...

— Հայրենասեր անձ մը...

— Կիրները...

— Ազգասեր, ուսյալ, կրթյալ...

— Սնտուկ...

— Դաստիարակյալ...

— Ներս առին, տարին...

— Ազնվասիրտ, ազնվախոհ, ազնվագեմ մեկը իր մեջ ունենալու համար։

— Սնտուկներուս մեջ ատանկ բաներ չկան,— պատասխանեց Աբիսողոմ աղան քալել սկսելով՝ բեռնակիրները դառնելու համար։

— Թեպետև դուք դիս չեք ճանչնար, բայց ես ձեր գերդաստանը խիստ լավ կը ճանչնամ. ձեր լուսահոգի հայրն իմ լրագրույս բաժանորդ էր։ Շատ բարի մարդ մ' էր, աղքատներուն ողորմություն կու տար, ազքատ աղջիկներ կը կարգեր և իրեն դիմողներուն բարություն կըներ։ Ատանկ ողորմած մարդերը շատ սպրելու են, բայց ի՞նչ օգուտ, անգութ մահը միշտ բարիները կառնե և թող կուտա չարերն, որ ապրին չարություն

ընեն։ Թողունք սակայն հինները և ուրիշ բանի վրա խոսինք։ Շոգենավուն մեջ հանգի՞ստ էիր։

— Շատ հանգիստ էի, պատվականապես կերա, խմեցի և պառկեցա,— պատասխանեց Աբիսողոմ աղան՝ քայլերն շատ և մեծ առնել ըսկզսելով։

— Եթե հանգիստ չըլլայիք, վաղվան լրագրույս մեջ պիտի գրեի և ընկերության ուշադրությունը պիտի հրավիրեի,— ըսավ խմբագիրն ետևվեն վազելով։

— Շնորհակալ եմ։

— Կաղաչեմ, ըսեք ինծի, քանի՞ տարեկան եք։

— Քառասուն։

— Վաճառական եք, կարծեմ։

— Այո՛... եթե անցագիր պիտի շինել տաք, հարկ չկա, վասն զի հատ մը ունիմ։

— Չէ, վաղվան թերթիս մեջ պիտի գրեմ, որ առաջի օրը Տրապիզոնեն մայրաքաղաքս եկավ մեծապատիվ Աբիսողոմ աղա երևելի վաճառականն, որ յուր լեզվագիտությամբ և վաճառականական հմտությամբն ծանոթ է մեր ազգայիններուն։ Տաճկերեն գիտե՞ք, կարծեմ։

— Ո՛չ

— Ֆրանսերե՞ն։

— Ո՛չ։

— Անգլիերե՞ն։

— Ո՛չ։

— Գերմաներե՞ն։

— Ո՛չ։

— Վնաս չունի, ես լեզվագետ պիտի ըսեմ ձեզի համար և ձեր վրայոք գովեստով պիտի խոսիմ։

— Ամեն Պոլիս եկողներուն անունները ձեր թերթին մեջ կը գրե՞ք։

— Գրեթե ամենն ալ, եթե ձեզի պես պատվավոր ազգայիններ ըլլան։

— Պոլիսեն գացողնե՞րն ալ կը գրեք։

— Գրեթե կը գրենք, եթե պատվավոր ազգայիններ ըլլան։

— Շատ լավ, իմ անունս ալ գրեցե՛ք, ես ալ պատվավոր ազգային մ՝ եմ։ Մեր քաղքին մեջ արտերու, եզներու, կովերու և ագարակներու տեր եմ... Ատոնք ալ գրե,— ըսավ այնպիսի դեմքով մը, որ կը հայտներ, թե մեծ շահ մ՝ուներ այս խոսքերուն հրատարակությանը մեջ։

— Հոգ մի՛ ընեք. խղճի և արդարության պարտք մը կատարելու համար անոնք ալ կը գրեմ։

— Երկու-երեք հատ ապատավոր ալ ունիմ... անոնք ալ լրագրույդ մեկ կողմը կրնա՞ս անցունել։

— Ինչո՞ւ չէ։

— Ոսկին ժամացույց և շղթա ալ ունիմ, բայց շոգենավուն մեջ չդոզ-ցընելու համար վրաս չառի. անոնք ալ գրել պե՞տք է,— հարցուց Աբիսողոմ աղան, որ բոլորովին մոռցած էր սնտուկները։

— Ատոնք գրելու հարկ չկա։

— Շատ լավ, բայց մյուս բաժիններս լրագրույդ մեջ ամենեն առաջ դիր, որ կարգան։

— Այնպես ընելու միտք ունիմ։

— Խոշոր գիրերով գրե։

— Հանգիստ եղեք. ամենեն խոշոր գիրերով։

— Միայն հարուստ մարդերուն գալն և երթալն կը գրեք... այնպես չէ՞։

— Այո՛։

— Եթե աղքատ մարդերն ալ կը գրեք, չեմ ուզեր, որ իմ անունս...

— Բնավ երբեք, ստակ չունեցողներուն անունները բնավ չենք գրեր, նույնիսկ եթե հազար ոսկի ալ տված ըլլան դպրոցի մը շինության համար։

— Ըսել է, որ դուք ամեն իրիկուն հոս կսպասեք Պոլիս եկող կամ անկից մեկնող հարուստները տեսնելու և անոնց անունները հրատարակելու համար, որպեսզի ժողովուրդն գիտնա, թե ո՛վ եկած է և ո՛վ գացած է... Տարակույս չկա, որ վաղը իրիկուն իմ անունս պիտի կարդամ ձեր լրագրին մեջ։

— Այո՛, ձեր հասցեն տվեք, որ տեղական թղթատարով ղրկեմ լրագիրը։

— Բերա, Ծաղկի փողոց, թիվ 2։

— Շատ աղեկ,— ըսավ խմբագիրն և գրպանեն թուղթ մը հանելով բաժանորդներուն ցուցակին մեջ անցուց Աբիսողոմ աղան։

— Վաղը առտու լույսը չճեղքված ղրկե, որ կարդամ իմ անունս լրագրին մեջ։

— Իրիկվան դեմ կը ղրկեմ, վասն զի լրագիրս իրիկուններըը կը տպվի։

— Ո՜րչափ ուրախ կըլլայի, եթե ձեր վաղվան լրագիրն առտուն տպեիք... բայց վնաս չունի, իրիկվան թող ըլլա, բավական է, որ անունըս խոշոր գիրերով գրվի։

— Այդ մասին հանգիստ եղեք. վաղը իրիկուն անպատճառ կը ղրկեմ լրագիրն ընկալագրով։

— Ընկալագրո՞վ... տեղական թղթատարով պիտի ղրկեիք հապա... Ընկալագիրն ո՞վ է, տունս գիտե՞...

— Ընկալագիրն թուղթ մ'է, որուն մեջ կը գրեմ. «Ընկալա մեծապատիվ Աբիսողոմ աղայեն... լրագրո տարեկան բաժանորդագին մեկ ու կես

ոսկի» և այդ թուղթը ձեզի կը հանձնեմ, որով տարի մը իրավունք կունենաք իմ լրագիրս ընդունելու։

— Տարի մը շարունակ պիտի գրե՞ք իմ անունս։

— Չէ՛, բայց դուք բաժանորդ պիտի ըլլաք իմ լրագրուս՝ մեկ ու կես ոսկի վճարելով ինծի։

— Մեկ ու կես ոսկի՞... շատ է... երեք քառորդ ոսկի չը բավե՞ր։

— Խմբագիրները բաժանորդագնույն վրա սակարկություն չեն ըներ...

— Շատ լավ. ղրկեցեք ձեր լրագիրն և այն թուղթը, բան մը կընենք։

— Սակայն չկարծեք, թե ես բաժանորդ գրելու նպատակով զձեզ տեսնելու եկա, քավ լիցի, այդ պզտիկությունը չեմ ընդունիր. բարեկամական պարտք մը կատարելու համար եկա զձեզ տեսնելու։

— Հայտնի բան է։

— Բնավ ձեր մտքեն չանցունեք, թե այս մարդը մեկ ու կես ոսկի փրցնելու համար զիս տեսնելու եկավ։

— Չեմ անցուներ։

— Վասն զի կան խել մը[1] մուրացկան խմբագիրներ, որք Պոլիս եկողները կողոպտելու համար անոնց քովը կերթան և բաժանորդ կը գրեն զանոնք. ես այդ բանը չեմ կարող ընել, վասն զի բնությանս մեջ չկա... ես իբրև պատվավոր մարդ կուզեմ ապրիլ։

— Հասկցա, իբրև պատվավոր մարդ կուզեք ապրիլ։

— Ինձ հետ ձեր ունեցած այս տեսակցությունն ալ ուրիշի մի՛ գրուցեք, վասն զի տեսակ մը բախտախնդիր, չվառական անձեր կան, որք բանդագուշական կենսագրություններ կը գրեն և իմ անձնականությունս կը խծբծեն։

— Կը հասկնամ, անձնականությունդ կը խծբծեն։

— Օրինակի համար սա պարագային մեջ հանցանք մ'ունի՞մ ես. զձեզ դիմավորելու եկա և խոստացա ձեր անունը լրագրուս մեջ հրատարակել. դուք ալ իբրև ողջամիտ ազգային մը, բաժանորդ գրվեցաք. կաղաչեմ, ըսեք, ձեր կոկո՞րդը սըղմեցի, որ ինծի բաժանորդ գրվիք։

— Ամենևին։

— Ատրճանա՞կ ցցուցի։

— Բնավ երբեք։

— Դանա՞կ քաշեցի։

— Ո՛չ. բայց ուրիշ տեղեր ատրճանա՞կ կամ դանա՞կ ցցունելով բաժանորդ կը գրեն։

— Ատ ըսել չեմ ուզեր, սա ըսել կուզեմ, որ դուք ձեր հոժար կամքով բաժանորդ գրվեցաք։

---

[1] խել մը— բավականին, բավականաչափ

— Այո՞,

— Եվ ես վճռեցի վարվելցս այս պարագայիս ձեր:

— Տարօրինակ չէ՞:

— Չվարվելցս այն իրավիճակուն պես, որ օտարական մը Պոլս գալն իմանայուն պես՝ վատ ուրախ կերթայ բաժնորդ գրեթե ամեն մարդու:

— Այդ չվատախնդրին իրավունք չունին քու անձնասիրությունդ վրդովելու... գուն վատ չատա՞ նկատիր ինծի...

— Շնորհակալ եմ ձեզմե... մեկա բարով, Աբիսողոմ աղա՛, օր մը ևս ներեցեք ձեզ ձանձրացուցի խոհեմ մը խնդրելու:

— Շատ աղեկ, օր մը ևս կու գաս, վարվելնիդ ձեզ անկախ մը ժողովուրդ նկատելու համար:

— Ներողութիւն ի խրթռիկն բաժակցութ իրարմե Բերայի քաղաքացիներ էրթեին ալ պետք ատանախանեն կնկայե. «Ղայֆէ՛ դուն ազատ մեզի՞ պիտի կտանէ, անիկա հարուստ տեղե մը ազգիկ կուգէ հասկնալ: Այս ուսանողներն վրա էրթայն և կնկայ ձայն մի իրարու վրայ ծալի և իրարու դլուխ պատռեն. որո՞ւ հոգ... ձեզ վճռե մը պետք ունինք այսպիսի ազգի մը ներկայացուցիչներ մանավանդ իրենց հարցերուն մեջ ամենեվին ուշադրութիւն չունին, որպես թե հարցը իրենց չվերաբերիր... այս անհոգութիւնը ներողութիւն կուտայ ինծի, որ ձեզի ըսեմ, թե ես ալ ձեզ պես ազգասեր մը եմ, ինչպես և ձեր ընտանիքը, որուն հետ ես ալ ունիմ ընտանեկան յարաբերութիւններ:

— Մեկդի կեցիր,— ըսավ իշավար պարսիկն Աբիսողոմ աղային՝ արդարացնել ուզելով յուր էշը։

— Ատ խոսքը առաջ ըսելու էիր, որ գդուշանայի,— պատասխանեց Աբիսողոմ աղան և ճամփան շարունակեց...

Դ

Այս լուսավորության վրա կես ժամ չանցավ, և Աբիսողոմ աղային ներկայացավ երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաններ, սեղանավորի[1] ալ չէր նմաններ, արհեստավորի ալ չէր նմաններ, գործավորի ալ չէր նմաններ, և վերջապես անանկ բանի մը կը նմաններ, որուն նմանը չկա։ Հագիվ երեսուներկու տարեկան կը թվեր։ Կապույտ աչերով, դեղին մազերով զարդարված ըլլալով՝ ուներ նաև երկու մատ մորուք, որ մայրաքաղաքիս մեջ կամ սգո նշան է և կամ չքավորության։ Հագուստներն այնքան հին էին, որ հնախույզները զանոնք գնելու համար մեծաքանակ գումար մը կու տային։ Սակայն եթե հագուստի մասին վանողական էր, դեմքի մասին քաշողական զորություն ուներ այս անձը։

— Ծառա եմ մեծապատվությանդ, մեծապատիվ տե՛ր,— պոռաց այս երիտասարդն սենյակեն ներս մտնելով և մոտենալով Աբիսողոմ աղային։

— Ի՞նչ կա, ի՞նչ կուզեք,— հարցուց Աբիսողոմ աղան վախնալով։

— Վսեմափայլ տե՛ր, ձեր գալուստն լսելով փութացի հոս գալ, իմ խորին մեծարանացս հավաստին ձեր ոտքերուն տակը դնել։

— Ոտքերո՞ւս տակը. շատ աղեկ, դի՛ր,— ըսավ Աբիսողոմ աղան, որ կը կարծեր, թե մուճակ բերած էր իրեն։

— Շնորհակալ եմ, բարձրապատիվ տեր,— ըսավ երիտասարդը, գլուխը բացավ և սեղանին վրա եկավ, կանգնեցավ։

Աբիսողոմ աղան այս տեսարանին առջև բոլորովին շվարած՝ անհամբեր տեսնել կուզեր, թե ի՞նչ պիտի ըներ այս պարոնը սեղանին վրա։

Երիտասարդն ծոցեն թուղթ մը հանեց և աչերն Աբիսողոմ աղային տնկելով՝ բոլոր ձայնովը պոռաց.

— Տյարք և տիկնայք...

Աբիսողոմ աղան այս ահարկու ձայնեն վախնալով՝ նստած տեղեն երկու կանգուն վեր ցատկեց և չկրնալով ինքզինքը զսպել՝ պոռաց.

— Ո՞վ է սա մարդը, հիմարանոցեն փախած խե՞նթ է, թե հիմարանոց երթալու հիմար։

— Հայ ազդն,— շարունակեց երիտասարդը ձայնը քիչ մը իջեցնե-

---

1 սեղանավոր — լումայափոխ, դրամափոխ, դրամավաճառ, սեղանավաճառ

լուն,— այսօր այնպիսի՜ հանգիստ մի ես կատարել, որ մեր հայրենյաց ամեներս քաջ դյուցազնական նվիրյալն է...

— Մխիթո՛ր է, ճշմա՛րիտ...

— Ես ամենևին չեմ ուզում խանգարել ձեզ խոսելու վրա մեծ հետաքրքրությամբ եմ լսում,— շարունակեց ասեղնաբերը,— և վերջը տգիտության դեմ, հիշյալս ուսումնակի՛ն դեմ, հրաժարությունը ապրիլի՛ սոսկալի դեմ, սարը գիշերվա ժամանակ, կիսովին ոչ ասեղ, այո՛, կըսեմ, այլ ասեղ մեծ մի հայն հասկցվելով, որ մարդիկ ասեղ ասեղ և հայրենիք բառերը լցնելու հանար շինված թյուր, ապա և հայրենիք բառերը մարդ մեջ, սոսկ ոգի բան չէին, այլ ամեն մարդու մարմնով և անոնք մեջ, ոգի մեջ ներկայացնելով ինքնին ամենքին ներկայացնելով ինքնին ամենքին ներկայացնելով ինքնին ամենքին

— Կաղաչեմ, թող տուր վերջացնեմ, ա՛հ, չես գիտեր, թե ո՛րչափ կը հուզվիմ, երբ ճառ կկարդամ։

— Վա՛ր իջիր։

Ատենաբանը բեմեն կիջնա և կերթա աթոռի մը վրա կը նստի։

— Հիմա՛ զրուցե ինձի, միտքդ ի՞նչ է,— կըսե Արխաղոմ աղան բարկութեամբ։

— Կաղաչեմ, մի՛ բարկանար։

— Ի՞նչ կուզես, զրուցե, շո՛ւտ, հիմա՛։

— Բարկութեամբ մի՛ վարվիր հետս, ոտքդ պադնեմ, սիրտս լեցված է, հիմա կսկսիմ լալ։

Եվ ատենաբանը կսկսի լալ։

— Լալու ի՞նչ կա, եղբայրս։

— Ծառադ կը փափաքի գրականութեամբ ազգին ծառայել, բայց այս ազգը շատ ապերախտութեամբ կը վարվի իւր գրագետներուն դեմ։

— Ատոր մեջ ես ի՞նչ հանցանք ունիմ։

— Դուք հանցանք չունիք և թերևս իրավունք ունիք... ոտանավորներ ունիմ գրած հայրենիքի վրա, սքանչելի կտորներ, պատվական տողեր, որոնց մեջ երևակայությունը, ավյունը, խանդն, հուրն ու բոցը սավառնաթև կը սլանան։

— Շատ աղեկ, ատոր համար լալո՞ւ է։

— Մեր ազգն անոնց հարգն ու պատիվը չի ճանչնար, զանոնք տղայական բաներ կը կարծե և թող կու տա, որ զանոնք գրողը անոթի մնա։

— Ես ի՞նչ ընեմ։

— Կաղաչեմ, քաղցրությամբ վարվե հետս։

— Ի՞նչ ըրած ունիմ քեզի։

— Ձեզի պիտի աղաչեի, որ...

— Ի՞նչ, շուտ ըսե...

— Մի՛ պոռար երեսս ի վար, հոգիդ սիրես, հիմա կսկսիմ լալ...

Նորեն սկսավ լալ գրագետը։

— Տեր Աստված, դուն համբերություն տուր ինձի,— ըսավ Արխաղոմ աղան մեկուսի։

— Խնդիրքս սա էր, որ կուզեի տպել տալ քիչ մը առաջ կարդացած ճառս...

— Գնա տպել տուր. քու ձեռքեդ բռնող կա՞։

— Պիտի խնդրեի ձեր մեծապատվութենեն, որ տպագրության ստակը դուք տայիք։

— Ինչո՞ւ... ի՞նչ պատճառ կա, որ քու ճառիդ համար ես դրամ տամ, կ'ելավ՞ած բան է, որ մեկը իրեն շահուն համար փրկք տպե, և ծաղքն Արխաղոմը տա...

— Կը խնդրեմ, սիրտս արդեն խոցված է, դուք ալ նոր վերք մը մի՛ բանաք հոս։

— Ինչո՞ւ վերք պիտի բանամ եղեր. գնա՛ բանդ, եղբա՛յր, փորձանք եղար գլխուս։

— Գիտե՞ք՝ որքան ծանր է գրագետի մը ասանկ խոսքեր լսելը...

— Ջեմ գիտեր և գիտնալ ալ չեմ ուզեր։

— Բանաստեղծի մը սիրտը շատ փափուկ է, ամենաթեթև խոսքեն մը կը վիրավորվի։ Այս նյութին վրա ոտանավոր մը գրած ունիմ, կարդամ, մտիկ ըրեք։

— Ոտանավոր մտիկ ընելու ժամանակ չունիմ։

— Կաղաչեմ, ոտանավորիս հետ խստությամբ մի՛ վարվիք. այն ոտանավորին համար, զոր դուք չեք ուզեր մտիկ ընել, երկու ամիս աշխատած եմ ես և երբ որ անոր նախատվիլը տեսնեմ, արժանապատվությունս կը վիրավորվի։ Կաղաչեմ, ոտանավորիս համար գեշ մի՛ զրուցեք... Կը խնդրեմ, թույլ տվեք ինձ կարդալ զայն անգամ մը...

— Ես ոտանավոր մտիկ ընելու չեկա հոս։

— Շատ լավ. ողբերգություն մը գրած եմ, անոր վրայեն անցնինք։

— Ջեմ ուզեր. ես անոթի եմ հիմա, կերակուր պիտի ուտեմ։

— Շատ լավ, ուտելիքի վրա ատենաբանություն մը ընեմ։

— Ժամանակ չունիմ մտիկ ընելու։

— Կաղաչեմ, այդ խոսքը ուրիշ անգամ մի՛ ըսեք, ասկե ավելի ծանր խոսք չկա հեղինակի մը համար, որ յուր մեկ աշխատասիրությունն ուրիշի կարդալու փափաք կը հայտնե։ Կը խնդրեմ, բարձրապատիվ տեր, քաղցրությամբ վարվեցեք հեղինակներու հետ։

— Գլխուս վրա՞ նստեցունեմ քեզի։

— Ոտքդ պագնեմ, մի՛ ծաղրեք զիս, ինչո՞ւ ձեր գլխուն վրա նստեցունեք։

— Ի՞նչ ընեմ հապա, քանակս քեզի տամ՝ հեղինակներու հետ քաղցրությամբ վարված ըլլալու համար։

— Ա՛չ, միայն ճառիս տպագրության ծախքը։

— Քանի՞ ռսկիով կը լմննա գործդ։

— Չորս ռսկիով կը լմննա, բան մը չէ, իմ մեկենասս[1] պիտի ըլլաս, ես ալ քու անունդ ոտանավորով մը գրքույկին ճակատը պիտի դնեմ։

— Ճակա՞տը դնես պիտի։

— Այո՛։

— Ինչո՞ւ համար։

---

[1] Մեկենաս — գրողներին, արվեստագետներին, գիտնականներին հովանավոր

— Որդեգի ամեն մի մարդ գիտնա, թե ձեր ստակովը տպված է այն գիրքը։

— Շատ լավ,— պատասխանեց Աբիսողոմ ապան և քսակեն չորս ոսկի հանեց, տվավ։ Հեղինակն հապար հարցանքով՝ դուրս ելավ։

Աբիսողոմ ապան նոևեն կանչեց պինքը և հարցուց.

— Ջկրնա՞ր ըլլալ, որ գրքին ճակատը սպասավորներուս ալ անունները գնես և իմացունես ապգին, որ Աբիսողոմ ապան կովեր, ոչխարներ, էշեր և ագարակներ ունի յուր քաղաքին մեջ։

— Այդ ձեր բսածները Հովվերգութեան ճյուղին կը վերաբերին։

— Ջեմ հասկնար։

— Ատոնց վրա ոտանավորներ կը գրվի. եթե փափաքիք, ոտանավոր մը շինեմ։

— Ի՞նչ ընեմ ոտանավորը։

— Լրագրի մը մեջ տպել կու տաք։

— Կը տպե՞ն։

— Ինչու չպիտի տպեն. եթե կես ոսկի տայու ըլլաք, քառասուն անգամ կը տպեն։

— Շատ աղեկ. ադ բսածդ գրե։

— Գլխուս վրա։

— Բայց աղվոր բան մը ըլլա։

— Շատ լավ։

— Այնպես որ տեսնողը հավնի։

— Հարկա՛վ։

— Վաղը առտու կբերե՞ք։

— Վաղը առտո՞ւ... Ի՞նչ կըսեք... մեկ ամիսեն հազիվ կրնամ պատրաստել։

— Մե՞կ ամիսեն։

— Հազիվ. ոտանավորը կարգալը դյուրին է, բայց գրելը՝ դժվար։ Գեղեցիկ ոտանավորի մը համար քիչեն քիչ երկու ամիս պետք է։

— Ի՞նչ կըսեք...

— Այո՛, բայց ես կաշխատիմ ամիսե մը ըմենցնել։

— Ատ ի՞նչ դժվար բան է ասիկ։

— Ի՞նչ կարծեցիք հապա. երկու ամիս պիտի սպասեմ, որ մուսայի ոտանավոր սատ գա և ներշնչե ինծի, որպեսզի գրեմ. ոտանց մուսայի ոտանավոր չգրվիր։

— Եթե այդ մուսան գալու չըլլա...

— Անպատճառ կու գա։

— Ջկրնա՞ր ըլլալ, որ նամակ մը գրես և ազդչես իրեն, որ շուտ մը գա, և դուն ալ երկու ամիս չսպասես։

— Նեղիս ինքնիրեն իռ գա, նայեսին պետք էր ինքնասպանութեան դիմաւորել մեզ, գոռ ոտեք ալեկի ամօթ գնալ բերել տար։ Մուսայի մ'օրհնեսա՝ մ' օրսկեցեն ալեկի չէ այդ։

Աբիսողոմ պոպն, ինչպես գիտցիր ընթերցողդ, ևը մոռար յուր անոթութեան ալեցեն ան, որ մեկն անոթ խոսք կու տար անոր ըլլալու, ևը լրագիր մեզ ալեցնելու և կամ նկնգելո մեզ ձանուցած ընելու, ինչպես նաև յուր քաոսի բերմեն ևը դուսր և դրամով ևը վարձատիր ալեն անոնք, որ իրեն ևը խոստանայի անոնց ծողովրդեն մեզ տարա ձերու փառասիրութեան ալ տեսակ մը անոթութեան է, զոր դրամով ևը հոգայեր ևը ինքնին ամրանեն։ Լրագրի մեզ գրկելու փափաքով կու գար ան, ոչ թէ ուրիշ բան, եթէ ոչ ինքնասիրութեան մեզ ալեցնելու համար։

— Ա՛յ, նիկու ոսիկ տալուն սեռ գործ կը գտնաս, և մուսա այս շաբաթ վազելով կու գա,— ասոնց պես ալեցնեց անհրաժեշտ բան չկայ ոսիկ բաղ։

— Գրի՛ ուրեմն իրեն, իմ կողմեն ալ հաստատ բարեկեր ըլլե՛ և ըսե՛, որ Աբիսողոմ պոպն քեզ տեսնել կուզե։

— Գլխուս վրա։ Մեռա բարյաւ, տեր, շնորհակալ եմ ձեզմե, ձառա մեմ ձեր ժամանակիցութենէ և կատարեմ ընդունելք...

— Ո՛չ,— ըսաւ Աբիսողոմ պոպ բարեկիրթ,— ալ նիկար ըրիր, ակա ինչ որ ըսիր, ընդունեցի և գնո ի՞նչ կուզես, որ ընդունիմ...

— Խորին հարգանցս հաւատացէք, տեր... որով մեռավ ձեր մեծա պատուելիութեան ամենախոնարհ ծառա։

— Շատ ալեկի։

Այս հարցումներն կուղղեր իրեն, երբ տան տիկինը ներս մտնելով ըսավ.

— Կերակուրը պատրաստ է, հրամմեցե՛ք, Աբիսողոմ աղա...

Ըստ տաճկաց ժամը գիշերվան չորսը զարկած էր...

Չ

Աբիսողոմ աղան աղվոր քուն մը քաշեց նույն գիշերը, վասն զի շատ հոգնած էր և թերևս հետևյալ օրն ալ չէր բանար աչերն, եթե փողոցի վաճառականներն առավոտուն իրենց ահարկու ձայներովն չխռովեին անոր քունը, մահվան այդ կտրոնն, որ ոչ միայն հոգնած մարդերու հանգստարանն է, այլև շատ մշտնջենական ցավերու առժամանակյա դարմանն է... Աբիսողոմ աղան ալ, որ փողոցի վրա սենյակի մը մեջ կը պառկեր, ստիպվեցավ կանուխ արթննալ։ Աչերը բանալուն պես անկողինեն ելավ, սնտուկը բացավ և ճերմակեղենները փոխեց, հետո լվացվեցավ և հագվեցավ։

Տան տիկինն, որ իմացած էր հյուրին ելած ըլլալն, վեր ելավ և զարդարուն սենյակ մը հրամցնելով զայն՝ իմաց տվավ, թե մեկն կըսպասեր վարը և զինքը տեսնել կուզեր։

— Ո՞ղ հրամմե,— ըսավ Աբիսողոմ աղան։

— Շատ լավ, կաղաչեմ, ըսե՛ք ինձի, խահվեն կաթո՞վ կը խմեք, թե առանց կաթի։

— Կաթ կը խմեմ առանց խահվեի։

— Կաթ բերեմ ուրեմն։

— Այո՛, կաթ բերեք։

Տիկինը վար գնաց։

— Տեսնենք ո՞վ է աս մարդը,— ըսավ ինքնիրեն խոշոր մարդը,— թերևս աղջիկ մը ունի կարգելու և իմ Պոլիս գալս իմանալով՝ առավոտուն կանուխ հետս խոսելու եկած է։ Բայց ես մինչև որ չստուգեմ աղջկան ինչ բնության տեր ըլլալը, խոսք չեմ տար. նախ ամեն բան հասկնալու եմ, աղջիկը քննելու եմ, վերջեն հորս հարցնելու եմ. վասն զի իմ սիրելս բավական չէ, պետք է որ հայրս ալ սիրե իմ կինս. ոչ թե միայն հայրս, այլ ամեն մարդ հավնելու է...

— Բարև, վսեմափայլ տեր,— ըսավ երեսնամյա և վառվռուն երիտասարդ մը սենյակ մտնելով և արագաքայլ Աբիսողոմ աղային վրդելով՝ անոր ձեռները սղմելու համար։

Աբիսողոմ աղան տեղեն ելավ և ձեռները հանձնեց այդ երիտասարդին, որ ուզածին պես սղմե և թոթվե զանոնք՝ հազար ու մեկ հարգանքներ մատուցանելով։

— Նստեցե՛ք, Աբիսողոմ աղա՛, կաղաչեմ, չվայլեր, որ ոտքի ել-

նեք,— ըսավ երիտասարդն՝ տիրոջը դարձնելով իրեն հանձնված ձեռները և կոտրտվելով ետ-ետ գնաց, թիկնաթոռի վրա նստավ։

Աբիսողոմ աղան բազմոցին վրա բազմեցավ։

— Արդարև, մեր պարտքն էր երեկ գալ և ձեր գալուստը շնորհավորել, բայց ուշ իմացանք ձեր գալն. ասոր համար հատկապես ձեր ներողությունը կը խնդրենք,— ըսավ երիտասարդն ձեռներն իրարու շփելով։

— Այսօր գալով պակասություն մ՚ըրած չենք ըլլար, որ ներողություն խնդրեք։

— Ձեր քաղաքավարությունն է, որ այնպես խոսիլ կու տա ձեզի, բայց մենք մեր պակասությունը միշտ կը ճանչնանք։ Արդարև, մեծ պակասություն մ՚է մեր ըրածը. ձեզի պես երևելի մարդ մը մայրաքաղաքս գա, և պատկերահան մը անմիջապես բարի եկարի չերթա, պակասություններու պակասությունն է, որ և ոչ մեկ կերպով մը կրնա պակասություն ըլլալե դադրիլ։

— Ամենևին պակասություն մը չէ, եթե բնավ չգայիք, դարձյալ պակասություն մը չէր համարվեր ինձի համար։

— Շատ վեհանձն եք։

— Ամենևին վեհանձն չեմ։

— Թող այնպես ըլլա, ատոր համար հիմա վիճաբանության մրտնելու հարկ չեմ տեսներ. միայն ինքդինքս ձեր տրամադրության տակ կը դնեմ և ձեր հրամաններուն կսպասեմ. եթե կուզեք, հոս քաշվելու եք, եթե կը փափաքիք, մեր գրասենյակը պատվել հաճեցեք, և հոն հանենք. ինձի համար միևնույն բանն է, դուք ինչպես որ կախորժեք, այնպես ընելու պատրաստ եմ։

— Ի՞նչ պիտի քաշել տանք... իմ ակռաներս աղեկ են։

— Գիտեմ, որ ակռաներդ աղեկ են, ինչպես նաև դուք ալ աղեկ եք. ես կը փափաքիմ ձեր լուսանկար պատկերը քաշել։

— Ես մինչև հիմա պատկերս բնավ քաշել տված չունիմ և քաշել տալու հարկ մ՚ալ չեմ տեսներ, վասն զի ամեն օր հայելի կը նայիմ և ինքդինքս կը տեսնեմ։

— Եթե ձեր պատկերը մեկու մը ղրկելու ուզեք, հայելին կրնա՞ք ղրկել, Աբիսողոմ աղա։

— Հայելին ինչո՞ւ ղրկեմ, ես կերթամ։

— Շատ աղեկ կը խոսիք, բայց ես մինչև որ ձեր պատկերը չհանեմ, չեմ կրնար հանգիստ ըլլալ. ինձի համար պզտիկություն մ՚է ձեր պատկերը չհաննելը, թող որ ձեզի համար ալ այնպես է։

— Ինչո՞ւ։

— Լաված բա՞ն է, որ ձեզի պես երևելի մարդ մը Պոլիս գա և պատկերը քաշել չտա. աշխարհ-արար ձեր վրա պիտի խնդացնե՞ք։

— Ինչո՞ւ։

— Պատճառը Հայտնի է, մեծ մարդերը բնականաբար մեծ բարեկամներ կունենան. դուք մեծ մարդ մ՛եք և այսօր կամ վաղը պիտի սկսիք մեծ մարդերու այցելություններն ընդունել։ Ասոնցմե շատերն իրենց պատկերներեն մեյմեկ հատ պիտի նվիրեն ձեզի, և դուք ալ պիտի ստիպվիք ձերինեն մեյմեկ հատ տալ անոնց։

— Եվ եթե չտամ, կը խնդա՞ն իմ վրաս

— Խնդալն ալ խա՞ղ է, ընկերություններու մեջ մատի վրա կառնեն ձեզի։

— Զարմանալի բան...

— Լավ ած բա՞ն է, որ ձեզի պես ապնվական մը պատկերը հանել չտա, մեծ ամոթ է...

— Մե՞ծ ամոթ...

— Այո, շատ մեծ ամոթ է, անվարտիք պտտիլն այնքան ամոթ չէ, որքան իրեն պատկերն չունենալը։

— Ես չէի գիտեր։

— Քաղաքակրթությունը և լուսավորությունը պարտք կը դնեն մեր ամենուս վրա, որ մեր պատկերներն ունենանք։

— Լրագիրները պիտի գրե՞ն, որ Աբիսողոմ ապան յուր պատկերը քաշել տված է։

— Լրագիրներու վերաբերյալ խնդիր մը չէ ատ...

— Լսել է՝ ակնոցիներու մեջ ծանուցում ալ չպիտի ըլլա։

— Ծանուցումի ի՞նչ հարկ կա, Աբիսողոմ ապա՛, կը ծաղրե՞ք դիս...

— Ծաղրե՞լ, ատոր շատ դեմ եմ ես... ի՞նչ իրավունք ունիմ ուրիշ մը ծաղրելու...

— Մի՛ բարկանաք...

— Չէ՛, կը բարկանամ, ես բնավորություն մը ունիմ, որ ամեն բան շիտակ կուզեմ։

— Շատ լավ. ի՞նչ դիրքով հանել կուզեք ձեր պատկերը։

— Միտք չունիմ պատկերս քաշել տալու, վասն զի անօգուտ բան մը կերևա ինծի։

— Ի՞նչ կըսեք, ասկից ավելի օգտակար ի՞նչ կա, եթե ձեր բարեկամներեն մեկուն այցելություն մը տալ ուզեք և ժամանակ չունենաք, ձեր մեկ պատկերը կը ղրկեք, կը լմննա, կերթա։ Եթե կարդված եք, ձեր ամուսնույն կը ղրկեք, որ ձեր բացակայությանն ատեն անոր վրա նայելով կարոտը կառնե. եթե ամուսնացած չեք, շատ աղջիկներ ձեր պատկերը կը տեսնեն և ձեր ո՛վ ըլլալը կը հասկնան, որով ընկերություններու մեջ ձեր անունը կը խոսվի։ Լուսանկար պատկեր մը այսօրվան օրս հացեն ավելի պետք է մարդուս. կաղաչեմ, որ համոզվիք, և ժամ առաջ երթաքեք ձեր պատկերը քաշեքե։

— Աղջիկներն ի՞նչպես և ո՞ւր պիտի տեսնեն իմ պատկերս...

— Չէ՞ որ ձեր բարեկամներուն պիտի տաք, անոնք ալ իրենց տուները պատկերներու հատուկ գրքի մը մեջ պիտի անցունեն և ամենուն պիտի ցուցնեն։

— Ցուցնելով ի՞նչ պիտի ըլլա։

— Ի՞նչ կուզեք, որ ըլլա... միշտ կը հիշվիք...

— Եթե չհիշվիմ, ի՞նչ կը կորսնցնեմ, հոգս էր իմին, թե զիս պիտի հիշեն. կուզեն՝ հիշեն, կուզեն՝ չհիշեն, ես անանկ գատարկ բաներու ստակ չեմ տար և քու խոսքերուդ ալ չեմ հավատար։

— Ասիկա պզտիկ էնսյուլթ մ'է։

— Էնսյուլթն ո՞վ է։

— Տե՛ր, գիտե՞ք, որ արթիսթ մը վիրավորեցիք ծանրապես։

— Ե՞ս վիրավորեցի։

— Այո՛, դուք...

— Պատկերս քաշել չտալուս համար գրպարտության սկսա՞ր... ես մինչև հիմա մեկը վիրավորած չեմ։

— Այսօր զիս վիրավորեցիք։

— Գնա՛ ոստիկանության իմաց տուր, պարապ խոսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ։

— Ոստիկանության երթալու հարկ չկա. կը խնդրեմ, որ ձեր բերնեն ելած խոսքը հաշտեցունեք ձեր քաղաքավարությանը հետ։

— Ես կովի մեջ չեմ մտներ, դնա՛, դուն հաշտեցուր, եթե կռիվ ընողներ կան։

Մանուկ ազան Աբիսողոմ ազային նախաճաշը կը բերե և հոտանի սեղանի վրա դնելեն վերջը՝

— Հրամմեցե՛ք, ձեր կաթը խմեցեք,— կըսե։

Աբիսողոմ ազան աթոռ մը կառնե, սեղանին առջև կը նստի և կսկսի կաթը խմել։

— Ի՞նչ որոշեցիք նայինք, Աբիսողոմ ազային պատկերը կե՞ս մեջքեն պիտի քաշեք, թե ոտքի վրա,— կը հարցունե Մանուկ ազան։

— Ոչ կես մեջքեն, ոչ ալ ոտքի վրա,— կը պատասխանե Աբիսողոմ ազան։

— Աթոռի մը վրա նստած ամբո՞ղջ պիտի քաշեք։

— Ո՛չ։

— Պառկա՞ծ պիտի հանեք։

— Ո՛չ։

— Քովընտի՞։

— Ո՛չ։

— Ի՞նչպես որոշեցիք ուրեմն։

— Որոշեցինք, որ մեր պատկերը բնավ քաշել չտանք։

— Ատ չըլլար. ատիկա մեծ պզտիկություն է, Աբիսողոմ ազա՛։

հիմա պզտիկներն բան, մեկն էնօրը գնա, ամեն ալ տարին քանի անգամ պատիկներն քաշել իրա տուն. նրիս ամսու տղաներ ամեն ձեռքը պահած բանա, տասներիս հատ ալ ոչ խնդրելներս և ոչ տխուր դեմքդուլ. Նյո՛, Նբիսողոմ աղա, աս ըսածներս հատ մը ինձ պատիկը ալ պիտի հատնի։

— Իրա՞վ կըսեք,— հարցուց Նբիսողոմ աղան։

— Ոտա խոսքիս բնավ պատասխանդյուն չունիմ. ինձ ասոնք չունեցաս, քու վրաս ալեկոծ չեն նայիր. բոլոր մեծ մարդերը ասոնք ունին։

— Մեծ մարդերն ունի՞ն. ալեկ գիտե՞ս։

— Նյո՛, ունին։

— Պզտիկներն ալ ունի՞ ըսիր հասա։

— Պզտիկներն այս չափ չունին, անոնք կամ երեք հատ և կամ չաո-չաո մեծ հատ հանել կու տան։

— Բնավ կաքաս չէր պեցնեի, որ պատիկներն այսչափ կարևորություն կու տան։

— Նյո՛, կարևորությունը հիմա դիտես պատիկներուն կարվի, և որքան ալեկոծ ըլլան, այնքան ալ կարվի կարևորություն հատնեն։

— Քանի որ ասենք յուր պատիկներն ունի, իմ մեծ մարդ ըլլալս ալ ոչինչ կու տա։ Դիտես դու ինչ կասեն պատիկներդ հանգիստ մեծ մարդ ըլլալուդ համար։

Նբիսողոմ աղան ուրիշ տեսակ է, խոզոր միրգով և փայ-

— Ձկրնա՞ր ըլլալ, որ սպասավորներս ալ առջես բարե բռնած հա-նենք։

— Շատ աղեկ կըլլա։

— Իրա՞վ կըսեք։

— Այո՛։

— Օրինակի համար ես ագարակներ ալ ունիմ, որոնց մեջ շատ մը կովեր, ոչխարներ, ձիեր, սագեր, բագեր կան, անոնք ալ կարելի չէ՞ պատկերին մեկ կողմը դնել։

— Ատոնք կարելի չէ, բայց սպասավորներդ կրնաս առնել, այնպես չէ՞, պարոն Դերենիկ։

— Այո՛, այնպես է,— պատասխանեց պատկերահանը։

— Ձկրնա՞ր ըլլալ, որ,— հարցուց Նորեն Աբիսողոմ աղան,— պատկերին տակը գրվի, որ այս մարդն ագարակներ, ձիեր, կովեր, էշեր ունի։

— Ատ չգրվիր. կրնա գրվիլ, բայց մինչև այսօր սովորություն եղած չէ։ Սակայն ի՞նչ հարկ կա զանոնք գրելու, արդեն ամեն մարդ շուտով կը մանա։

— Ձիու վրա նստած կրնա՞ք հանել։

— Այո՛,— պատասխանեց Դերենիկը։

— Ձին վազցունելով սակայն։

— Ատ դժվար է։

— Շատ լավ, վաղը կնայինք։

— Եթե կուզեք, մեքենան հոս բերեմ վաղը։

— Այո՛, այո՛, հո՛ս բերեք,— կրկնեց Մանուկ աղան,— վասն զի չվայլեր, որ Աբիսողոմ աղան ձեր սենյակը գա։ Մեծ մարդերը միշտ իրենց տուներուն մեջ քաշել կու տան պատկերնին։...

ԵՐԱՆՈՒՀԻ ԳԱՐԱԳԱՇՅԱՆ

(«Ազգային ջոջեր»-ից)

Երանուհի Գարագաշյան, դերասանուհի, ծնավ Իճատիե, իր հաշվով՝ 1859-ին, իմ հաշվով՝ 1851 դեկտեմբեր 4-ին։

Երանուհին լույս ընծայվելուն պես, թաթիկներով սկսավ ձևեր ընել։ Վեց-յոթ ամսու եղած-չեղած, ոտքի ելավ և քալել սկսավ։ Մեյ մը աս-դին, մեյ մը անդին վազելովը, ձեռքն իննկածը կոտրելով-թափելովը, բարձր ձայնով պոռալովը, իսկույն հայտնեց, թե դերասանության մեծ հարմարություն ունի։

1856-ին թաղին վարժարանը ղրկվեցավ, ուր լմնցուց Երանուհին յուր Քերականը, Հեգարանը, Սաղմոսը, Գործք առաքելոցը ու նարեկը, ու 1862-ին վարժարանեն ելավ։

1865-ին, երբ Վարդովյան էֆենտին ոտքի ամաններըը ձեռքը բռնած փողոցե-փողոց, թաղե-թաղ կը վազեր դերասանուհի գտնելու համար— այն ատեններըը դերասանուհի մը գտնելը հիմա հայերեն ներկայացում-ներուն թատրոնի մեջ հանդիսական գտնելեն ավելի դժվար էր— և էսքի-լեր ալբըըմ[1] պոռացող հրեաներու նման, ամեն դուռ կզարներ, ու «դե-րասանուհի մը ունի՞ք մի» կը հարցուներ, դիպվածով Գարագաշյանին դուռը զարկավ, ներս մտավ և իրեն հատուկ համոզելու եղանակը ձեռք առնելով, համոզեց ծնողքը, թե աղջիկնին դերասանության տան, թե աստվ ազգին մեծ ծառայություն պիտի ընեն, թե աղջիկներուն ապագան շատ աղեկ պիտի ըլլա, թե մեծ ապագա մը կսպասե աղջիկնուն և թե պապան շատ չսպասեր, կերթայ, և թե վերջապես Երանուհին պետք է դերասանուհի ըլլա։

Երանուհին դերասանուհի բառն լսելուն պես՝ նույնը զգաց, ինչ որ կզգա տղա մը, երբ իրեն ըսես, թե քեզի շաքար բերի, կամ ինչ որ կըզ-

---

1 Էսքիլեր ալբըըմ— հնոտիներ եմ գնում

---

1 պատ— բալ, պատուհան
2 անասուն— այստեղ՝ բեմադրիչ

ղեկավարում էր Ռուբեն Սիմոնովը։ Ես, ձգձգ տալով՝ տատիս, բայց վերջը որոշեցի գնալ հանդիսատես լինել, պատկերս, ինչու չէ, տպագրվեր թերթում։ Ներս մտնելիս ինձ ասացին, որ ներկայացումը կսկսվի (այն ատեն այդպես), ուշ պատճառով քիչ մը հետաձգված։ Ես ամեն ինչ մոռացա, բայց հիմա, տարիներ անց, հիշում եմ, որ ներկայացումը ոչ թե ինձ համար, այլ ինձ հետ միասին սկսվեց մի ուրիշ մարդու, որ ինձ հետ նստած էր։ Ես չգիտեի, թե ինչ է թատրոնը, ինչ է ներկայացումը, ինչ է դերասանական խաղը։ Ես ոչինչ չգիտեի։ Ես միայն գիտեի, որ ես այս տեսնում եմ ինձ համար ինչ-որ անհասկանալի բան, որ ինձ հետ նստած մարդը ամեն րոպե ինձ հարցնում է, թե ինչ եմ զգում, ինչ եմ մտածում, ինչ եմ ուզում։ Ես ոչ մի բան չէի ուզում, ոչ մի բան չէի մտածում, ոչ մի բան չէի զգում։ Ես միայն նայում էի, լսում էի, ականջ էի դրել, որ ոչ մի բան չկորչի, ոչ մի բան չանցնի անուշադրության։ Ես ուզում էի ամեն ինչ հասկանալ, ամեն ինչ ըմբռնել, ամեն ինչ իմանալ։

Օրիորդ Ֆարտաշյանը նստեցրեց մեզ բոլոր հանդիսատեսներին մի ուրիշ տեղ, որ ավելի մոտ էր բեմին։ Ես ինձ ավելի լավ զգացի, ավելի ազատ, ավելի ինքնավստահ։ Ես ինձ ավելի լավ զգացի, որովհետև ես ինձ հետ նստած մարդուն չէի տեսնում, ես ոչ ոքի չէի տեսնում, ես միայն տեսնում էի բեմը, որ ինձ համար էր կազմակերպված, որ ինձ համար էր ստեղծված։ Ես ինձ զգում էի ինչ-որ մի ուրիշ աշխարհում, ինչ-որ մի ուրիշ կյանքի մեջ, որ ինձ համար էր ստեղծված։ Ես ինձ զգում էի ինչ-որ մի ուրիշ ժամանակում, որ ինձ համար էր ստեղծված։ Ես ինձ զգում էի ինչ-որ մի ուրիշ տեղում, որ ինձ համար էր ստեղծված։ Ես ինձ զգում էի ինչ-որ մի ուրիշ մարդու մեջ, որ ինձ համար էր ստեղծված։ Ես ինձ զգում էի ինչ-որ մի ուրիշ էակի մեջ, որ ինձ համար էր ստեղծված։ Ես ինձ զգում էի ինչ-որ մի ուրիշ էության

Անեն հոգւեր շշարժիր, թաղուն բերիչ շուփ կայն սիրտ մը ուիր. Եթե ձեռքով մը տանդ՝ սիրտը թուղթ շնչեր, ալ ապրիլ կը մտածես գալ քեզի՝ ոտքերդ, որպեսզի տեսադիր վրա մարդ հարկ ըլլա եթե՝ թեւերդ ձգես ինչպես, ու ձեռքդ ծալես մը ձախակողմդ վրա։ Ծոցիդ ձեռքդ ալ ինչպես ուզես մի՛ մոռնար, որ բարիքիդ ձեռքը ու շարժուձևերդ պահ մի՛ կորսնցնեն, որ բարիացնեն ուրիշները։

Կը փափաքիմ, որ այդպիսի առաջ գնացի, ինչպես որ ձեռքդ ալիսի երբեմն ձեռ ապրելու կերպը ի սկզբան հայտնեցի։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3

Ա մաս

ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ հին ժողովրդական բանահյուսություն

Հայկ և Բել (Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ից)— թարգմ. Ստ. Մալխասյանց* 4

Արա Գեղեցիկ և Շամիրամ— թարգմ. Ստ. Մալխասյանց 11

Տիգրան և Աժդահակ— թարգմ. Ստ. Մալխասյանց 13

Սասնա ծռեր (հատվածներ) 19

Վահագնի ծնունդը— թարգմ. Ա. Մնացականյան* 42

Արտաշէս և Սաթենիկ— թարգմ. Ա. Մնացականյան* 43

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 5—9-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Մեսրոպ Մաշտոց

Ով կենցաղոյս— թարգմ. Ա. Մնացականյան* 47

Իմ հույս— թարգմ. Ա. Մնացականյան 47

Ամեն անգամ— թարգմ. Ա. Մնացականյան 47

Կորյուն

Երանելի վարդու, մեր թարգմանիչ սուրբ Մեսրոպ վարդապետի վարքի և մահվան պատմությունը (հատվածներ)— թարգմ. Մ. Աբեղյան 48

Փավստոս Բուզանդ

Արշակ և Շապուհ (հատվածներ)— թարգմ. Ստ. Մալխասյանց . . . 51

Մովսես Խորենացի

Ողբ— թարգմ. Ստ. Մալխասյանց 56

* Աստղանիշ կրող բնագրերը ներկայացված են և՛ գրաբարով, և՛ իրենց թարգմանություններով։

Եղիշե

*Վարդանի և հայոց պատերազմի մասին (հատվածներ)— Թարգմ. Ե. Տ. Մխ-
նասյան 60*

Ղազար Փարպեցի

Այրարատյան գավառը (հատված)— Թարգմ. Մ. Տ. Գևորգյանց . . . 65

Դավթակ Քերթող

Ողբ մեծ իշխան Վահանշերի մահվան առթիվ— Թարգմ. Ա. Մնացականյան . 68

Խոսրովիդուխտ Գողթնացի

Շարական Վահան Գողթնացուն— Թարգմ. Ա. Մնացականյան 70

ՀՆԱ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 10—18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Գրիգոր Նարեկացի

— Այն փոքրիկ հօտին— Թարգմ. Ա. Մնացականյան 72*
Տաղ աղնիւ Գրիգորի Նարեկացւոյ— Թարգմ. Ա. Մնացականյան . . . 73*
— Տաղ վարդավառին— Թարգմ. Ա. Մնացականյան 75*
Տաղ յայտնութեան— Թարգմ. Ա. Մնացականյան 77*
Տաղ յարութեան— Թարգմ՝ Ա. Մնացականյան 79*
— Մատյան ողբերգության (հատվածներ)— Թարգմ. վ. Գևորգյան . . . 83

Ներսես Շնորհալի

— Ողբ եդեսեայ քաղաքի— (հատուածներ) 87
— Հանգուցք 90

Մխիթար Գոշ

— Առակներ— Թարգմ. Ա. Մնացականյան 93

Հարդան Այգեկցի

— Առակներ— Թարգմ. Ա. Մնացականյան 95

Հայրեններ կամ Քուչակին վերագրվող տաղեր 100

Ֆրիկ

Ֆրկանն ասացեալ է կաֆայս վասն հոգոյ 104
Բան ի Ֆրիկ գրքոյն 105
Բողոք Ֆրկանն կոչեցեալ բանաստեղծի ընդդէմ բազդին 110

Գոստանդին Երզնկացի 113

Տաղ սիրոյ 115
Ոմանք չարախօսեն գինէն վասն նախանձու 118

Հովհաննես Թլկուրանցի 118

Տաղ սիրոյ 119
Տաղ գարնան 122
Տաղ քաջի Լիպարտին 315

Մկրտիչ Նաղաշ

Տաղ վասն զարիպի ասացեալ 126
Խրատական բաներս ազահութեան և անընդունութեան 127

Գրիգորիս Աղթամարցի

Նորին Գրիգորիսի ասացեալ 129
Տաղ Աստուածատուր Խաթայիցւոյն 134

Նաղաշ Հովճաթան

Վասն գեղեցիկ արուեստաւորաց 135
Տաղ ի վերայ Այվազին չրաղացին 137

Պաղդասար Դպիր

Մէկ ազնուի մի սէրն 139
Ի ննջմանէդ 140

Պետրոս Ղափանցի

Զվշտակրութենէ Հայրենեաց մերոց 141
Զքաղցրիկ թուշոց կաքաւուց 142

Սայաթ-Նովա

— *Ամեն սազի մեջը գոված* 144
— *Դուն էն գըլխեն* 145
— *Աշխարումըս ախ չիմ քաշի* 146
— *Քանի վուր ջան իմ* 146
Արի համով ղուլղուլ արա 148
— *Աշխարըս մե փանջարա է* 149
— *Արթար դատե* 150
— *Ջեռը վի կալ* 150

Բ մաս

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հարություն Ալամդարյան

Պարերգություն 152

Մեսրոպ Թաղիադյան

Գյուղական աղջիկ եմ 154

Խաչատուր Աբովյան

Վերք Հայաստանի (Հատվածներ) 156

Ստեփանոս Նազարյան

— *Մայրենի լեզու* 183

Դևոնդ Ալիշան
— Հայոց աշխարհիկ 184
Պլպուլն Ավարայրի 185
— Հրազդան 189
Լուսնկային գիրկմանաց Հայոց 190

Միքայել Նալբանդյան
Ագաւութիւն 192
Մանկության օրեր 193

Ռափայել Պատկանյան
— Արաքսի արտասուքը 195
— Մեծ 198
— Հույս 199

Սմբատ Շահազիզ
— Նրագ 200
— Աշտարակ 206

Գևորգ Դոդոխյան
— Միջեռնակ 202

Մկրտիչ Պեշիկթաշլյան
Գարուն 204
— Նորայր եմք մենք 205
Մահ քաջորդվույն 206
Թաղումն քաջորդվույն 207

Նահապետ Ռուսինյան
— Կիլիկիա 209

Պետրոս Դուրյան
— Սիրել 210
— Դրժել 211
— Լճակ 213
Տրտունջք 214
— Իմ մահը 216
— Իմ ցավը 217

Պերճ Պռոշյան
Հացի խնդիր (Հատվածներ) 218

Դանիել Աղայան
Երկու քույր (Հատվածներ) 235

Ամիրխանյան–Հարությունակը (Աշխատություններ) . . . 240

Բաֆֆի

Ամիրվեր (Հատվածներ) 253

Գաբրիել Սունցեցյան

Գետը (Հատվածներ) 275

Հակոբ Պարոնյան

Մեծապատիվ ժողովականներ (Հատվածներ) . . . 292

Պրանուշ Գալշազյան («Հզգայիին չոչխոց») 311

ԳՐԱԴԱՐԱՆ